

# ՄԵՐ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԱՍԱՑՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒՄԸ ԵՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՓՐՈՒԹ. Ա. ՊԱՏՄԱԳՐԵԱՆ

**ՕՐՈՒԱՅ ԺԱՄԵՐԸ**

**ՆԻ ՆՐԱՆՑ ՅԱՏԿԱՑՈՒԱԾ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Հայ երաժշտական ժառանգութեան կարեւոր ճիւղերից մէկն է մեր հոգեւոր երգասացութիւնը, որ համեմատաբար քիչ է ուսումնասիրուել եւ չի գտել իր արժանի գնահատանքը։ Վերջին տարիները միայն Հայաստանում այդ ուղղութեամբ ստեղծուել է որոշ հետաքրքրութիւն, ուր փորձեր են կատարուած վերծանելու մեր միջնադարեան խազագրութիւնը, մշակելու մեր տաղասացների եւ դուսանների երգերն ու եղանակները։

Անպիճելի իրողութիւն է այլեւս, որ նախաքրիստոնէական շրջանի հայկական մշակոյթից մեղ գրեթէ բան չի մնացել, եթէ չհաշուենք մի քանի գուսանական երգերի մնացորդ-փշրանքները։ Ուրո՞շ՝ հոգեւոր երգասացութիւն ասելով պէտք է հասկանալ քրիստոնէական Եկեղեցու երգեցողութիւնը, որ կարելի է բաժանել երեք տարբեր խմբերի։

ա.՝ Ամենօրեայ ժամերգութեան յատկացուած երգեր։

բ.՝ Զանազան խորհուրդների յատկացուած ծիսական երգեր (*Մկրտութիւն, Պսակ, Թաղում, Եւայլն*)։

գ.՝ Պատարագի երգեցողութիւն։

Հետաքրքրական է մեր նախնիքների օրուայ ժամերի բաժանման կերպը, նրանց յատկացուած արարողութիւններն ու երգեցողութիւններ։

Ժամանակը չափելու համար նրանք որդեգրել են Հռոմէական եւ Եգիպտական սիստեմները – Արեւի ժամացոյցը, Զրաչափը եւ Աւազաչափը։

Արեւի ժամացոյցը հիմնուած էր, ինչպէս յայտնի է, Արեւի ձղած ստուերների վրայ. բայց որովհետեւ տարուայ մի քանի ամիսները Արեւը չէր երեւում, մանաւանդ ձմրան ամիսներին, հարկ զդացին որդեգրելու Զրաչափը եւ Աւազաչափը։ Զրաչափը կամ Զրացոյցը մի քամիչ դործիք էր (Փելթըր) որի մէջ լցուած ջուրը քամուելու համար պէտք եղած տեւղութիւնը դառնում էր հիմք՝ ժամանակը չափելու համար։ Նոյնը կարելի է ասել նաեւ Աւազացոյցի կամ Աւազաչափի համար, որ մինչեւ այսօր տանտիկինները դործ են ածում խոհանոցում։

Այդ նախնական միջոցներով ժամանակը չափելուց յետոյ նրանք օրը բաժանել էին 12 մասի, որոնցից իւրաքանչիւրը իր յառուկ անունն ունէր։

- |                   |               |
|-------------------|---------------|
| 1. Գիշեր          | 7. Միջօրէ     |
| 2. Առաջին հաւախօս | 8. Եւս Միջօրէ |
| 3. Վերջին հաւախօս | 9. Լրումն     |
| 4. Արշալոյս       | 10. Երեկոյ    |
| 5. Առաւօտ         | 11. Ճրագալոյց |
| 6. Նախամիջօրէ     | 12. Կրակմար   |

Այս անունները տարբեր ժամանակներում եւ տարբեր գաւառներում ունեցել են ուրիշ անուններ։ Ինչպէս օրինակ՝

#### ՑԵՐԵԿՈՒԱՅ ԺԱՄԵՐ

1. Այդ
2. Մայդ (ցայդ)
3. Զայրացեալ
4. Ճառագայթեալ
5. Շառաւիղեալ
6. Երկրատես
7. Շանթակող
8. Հրակաթ
9. Հուր փայլեալ
10. Թաղանթեալ
11. Արագոտ
12. Արփող

#### ԳԻՇԵՐՈՒԱՅ ԺԱՄԵՐ

1. Խաւարակ
2. Աղամուղջ
3. Մթացեալ
4. Շաղւոր
5. Կամաւոր
6. Բաւական
7. Խօթափեալ
8. Գիզակ (Գիլակ)
9. Լուսնակն
10. Առաւօտ
11. Լուսափայլ
12. Փայլածու

Հին մատենագիրների մօտ յիշում են նաեւ Լուսադէմ, Արզոթարան եւ այլ ժամանակի անուններ։

Այս բաժանումներին մեր Եկեղեցին յարմարցրել է աղօթքի յատուկ պահերը, որոնք հետեւեալ անուններն ունեին.

- |              |                   |
|--------------|-------------------|
| 1. Նախատօնակ | 4. Արեւագալ       |
| 2. Գիշերային | 5. Երրորդ Ժամու   |
| 3. Առաւտեան  | 6. Վեցերորդ Ժամու |
|              | 7. Երեկոյեան      |

Տօնացոյցի եւ Ժամադրքի մէջ մանրամասն յիշատակումներ կան այս պահերին եւ Համապատասխան աղօթքների ու Երգերի մասին:

Ժամանակի ընթացքում այս պահերը կրծատում են եւ իշնում Երեքի: Այս մասին Յովհ. Օձնեցին տալիս է այդ պահերի անունները եւ Երեք թուի բացատրութիւնը.

— Ի սկսման աւուրն, Միջօրէի եւ ըստ Երեկոյս — Երից հատուածըն կենաց մեր կեանքի երեք շրջանները խորհրդանշող՝ մանկութիւն, Երիտասարդութիւն եւ ծերութիւն:

Օձնեցուց շատ առաջ նոյն պահերը Հաստատում են նաեւ Փաւատոս Բիւզանդը, Փարավեցին եւ Եղիշէն — Յայդ, Յերեկ եւ Երեկոյ: Երեկոյի փոխարէն Երբեմն դործ է ածուել գիշեր բառը, որ Համապատասխանում է Օձնեցու «Ի սկսման աւուրն»ին, որովհետեւ օրը, նրանց Համար, սկսում էր կէս գիշերին:

Մեր պատմիների վկայութեամբ մեր նախնիքը թէեւ օրը Երեք անդամ են Եկեղեցի յաճախել, բայց աղօթել են եօթն անդամ, առաջնորդուելով Սաղմոսերդուի այս տողերով: Եօթն անդամ յաւուրն օրինեցից գիեզ վասն իրաւաց եւ արդարութեան հոց: Խոկվանքերում եւ մենաստաններում լրիւ կերպով կատարւում էին նախատեսուած կանոնական պահերի արարողութիւնները:

Բացառիկ պարագաներում լիբոյիշեալ պահերին աւելանում էին Խաղաղականի եւ Հանդստեան Ժամասացութիւնները:

Ի՞նչպէս էին լցնում այդքան երկար պահերը. ի՞նչ էին Երդում կամ աղօթում. ի՞նչպէս ձեւակերպուեց մեր Եկեղեցական Երդասացութիւնը: Այս հետաքրքրական Հարցերն է որ պիտի փորձնենք ուսումնասիրել ներկայ յօդուածով:

## ԵԲՐԱՅԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնէութեան պատմութիւնից յայտնի է, որ Յիսուսի աշակերտները եւ առաջին Հաւատացեալները հրեաներ էին, ՕՐԻՆԱՑ Հաւատարիմներ: Գործք Առաքելոցից տեղեկանում ենք, որ նրանք կանոնաւոր կերպով յաճախում էին Երուաղէմի Տաճարը

այստեղ աղօթելու եւ ներկայ գտնուելու Մովսէսի տնօրինած ամենօրեայ Զոհաբերութեան արարողութեան :

«Համապազօք կամխեալ միաբանութեամբ ի Տաճարն առտնին քեկանէին զիացը եւ առնաւին կերակուր ուրախութեամբ եւ միամուրթեամբ սրտի» (Գործք Առաքելոց Բ. 46) :

Նրանց համար քրիստոնէութիւնը մովսիսականութեան հակադրուող մի նոր կրօն չէր, այլ նրա «փառապանծ պառուղը» յենուելով Յիսուսի ծանօթ արտայայտութեան վրայ թէ՝ «ոչ եկիլուծանել, այլ՝ լիուլ» չեմ եկել լուծարքի ենթարկելու, այլ՝ լրացընելու :

Հետեւում է, ուրեմն, որ առաջին քրիստոնեաները Մովսիսական Տաճարում էին հաւաքւում աղօթելու եւ լսելու Առաքեալների քարոզներն ու խրատները : Նրանք նոյնիսկ Տաճարում իրենց մասնաւոր անկիւնը ունէին, որ կոչւում էր Սրահ Սողոմոնի :

«Եւ էին միարան ամենեմեան ի Սրահին Սողոմովնի եւ յայլոց անտի ոչ ոք իշխէր մերձենալ առ նոսա, այլ յարգէր զնոսա ժողովուրդն եւ առանել եւս յաւելուին հաւատացեալքն ի Տէր բազմութիւն արանց... (Գործք Առաքելոց Ե. 12) :

Սակայն երբ հալածանքներն սկսուեցին Երուսաղէմում քրիստոնեաների դէմ, հաւատացեալները հարկադրուեցան հեռանալ Տաճարից եւ հաստատեցին իրենց ժողովարանները, որին տուին Վերնատուն անունը :

Առաջին քրիստոնեաները հրէական Տաճարից իրենց նոր ժողովարանը տարին Տաճարի սովորութիւնները, աղօթքներն ու երդուերը :

Պօղոս Առաքեալը, երբ իր հովուական թղթերում յաճախ խօսում է Հոգեւոր երդերի եւ աղօթքների մասին, բնականարար այս երգերին էր ակնարկում :

«Ուաւցանել եւ խրատել զմիմեանս սաղմոսիւք եւ օրինութեամբ եւ երգօֆ հոգեւորօֆ» :

Առաջին քրիստոնեաները Տաճարից ժողովարան փոխադրեցին ոչ միայն հրէական աղօթքներն ու երգերը, այլ նաև մովսիսական տօնները եւ սովորութիւնները՝ նրանց տալով քրիստոնէական իմաստ եւ խորհուրդ: Եղիպտոսից ազատադրման նուիրուած Պասէքի տօնը փոխարինուեց Յիսուսի Յարութեան տօնի հետ. Տասնարանեայ Պատուիրանաց տօնը, որ կատարում էր Պասէքից 50 օր յետոյ, փոխարինուեց Հոգեւալուստի տօնի հետ: Զոհաբերութեան արարողութեան փոխարինեց նախնական Պատարագը:

Քրիստոնէական Եկեղեցին հրէական Տաճարից փոխ առեց նոյնինկ կրօնական պարերը, որ մաս էին կազմում կրօնական արարողութեան :

Յետագայ դարերում կրօնական պարերը մասնաւոր կարեւութիւն ստացան Եւրոպական մի շարք Եկեղեցիներում, որոնց հետքերը մինչեւ այսօր դեռ մնում են : Այսպէս, միջազգային համբաւ ունէր մինչեւ վերջերս Սևլիլլայի կրօնական պարերի փառատօնը, որ ամէն տարի ամառը տեղի էր ունենում եւ որին ներկայ դանուելու համար այնտեղ էին շտապում ոչ միայն Սպանիայի, այլ նաև աշխարհի բոլոր անկիւններից :

Զարմանալի թող չթուայ, եթէ յիշենք, որ մեր Եկեղեցում եւս պարեր են եղել, որի մասին հատ ու կտոր տեղեկութիւններ են մեղ հասել :

Այսպէս օրինակ, Նարեկացին վկայում է որ Ստեփաննոս Մոկաց եպիսկոպոսը դիմում է Կոստանտին եւ Վասիլ կայսրներին եւ Քրիստոսի Խաչափայտից մի նշանը է խնդրում Աբարանի Եկեղեցում ղնելու համար : Այդ առթիւ եպիսկոպոսը պատրաստել է տալիս ոսկեծոյլ մի խաչ, որի մէջ պիտի պահուէր թանկագին մասունքը : Խնդրանքն ընդունւում է եւ եպիսկոպոսը մեծ թափօրի զլուխն անցած եւ «Ետուր երկիդածաց քոց նշան» Սաղմոսը երգելով գնում է ընդառաջ՝ «Ի ծափս ձեռին, ի տրոփումն կայքելով կաքաւման ոտից» : Այսինքն՝ ծափ տալով եւ ոտքերը տրոփելով պարում էր (կաքաւել) :

Մի ուրիշ վկայութիւն մենք գտնում ենք Մկրտիչ Նաղամի մօտ, որ Նկարագրում է թէ ինչպէս 1447-ին Արգնիի Եկեղեցին նորոգուում է եւ նրա վերաբացումը կատարում է մեծ հանդիսաւորութեամբ : Եպիսկոպոսը «Օրիներ, ցնծայր եւ կաքաւեր ի գալիքս Եկեղեցոյ, որպէս երկնաւոր վեսայ ի մաքուր առագաստին» :

Տօնապատճառը, որ տօնական հանդիսութիւնների ուղեցոյց զիրքն է, Տեառնդառաջի հանդիսութեան մասին յիշում է, որ արարողութիւնից յետոյ քահանաները, դպիրները եւ մանուկները դրսում, որպէս Հրեշտակներ, պիտի ծափուեն եւ կրակէ բոցերի շուրջը պիտի դառնան որպէս սերովըքներ :

«Քահանայք, դպիրք եւ մանկունք շրջապատեալ զբոցով շուրջ գան, ծպտեալ իբր սերովըքն՝ սաւառնել քելօֆն» : Ուրեմն, «չ միայն պիտի շուրջ գան, այսինքն՝ պարեն, այլ նաև Հրեշտակների հաղուստներ պիտի հաղնեն եւ սաւառնելու ձեւեր պիտի անեն» :

Եկեղեցական պարի վերջին մնացորդը կարելի է համարել մեր Եկեղեցում Անդաստանի ծէսը, ուր Եկեղեցական դասը երկու մասի բաժանուած, դառնում է եւ օրհնում աշխարհի չորս կողմերը :

Այսպէս ուրեմն, Յիսուսի աշակերտները եւ առաքեալները իւրացրին հրէական Տաճարի բոլոր աղօթքները, տօները եւ նրանց քրիստոնէական իմաստ եւ խորք տալով տարածեցին այն բոլոր երկներում, ուր աւետարաննեցին։ Եւ բնաւ դարմանալի չէ որ այսօր երբ համեմատում ենք Արեւելեան հին - կոպտական, յունական, ասորական, եթովպական, հայկական - եկեղեցիների սաղմոսերդութիւնները, աղօթքները եւ նոյնիսկ որոշ երգերը, գրեթէ նոյնութիւն ենք գտնում, որ միօրինակ, անհարազատ եւ անհրապոյր էր։

Ճիշդ է նկատում Եզնիկ Կողացին, երբ ասում է - Լեզուք մեր ընդարձացեալ են ի սաղմոսերգութենի՛ ... շրթամբք սիրելիք զԱստուած... որովհետեւ արարողութեան մեծ մասը սաղմոսների ընթերցումով էր տեղի ունենում։

Այս անպատեհութիւնը դարմանելու համար է, որ Նիկիոյ ժողովում այս հարցը քննարկման է ենթարկւում եւ որոշում է, որ գոնէ Ասագ Ուրբաթի, Շաբաթի եւ Յարութեան տօներին մասնաւոր կարեւորութիւն տրուի՝ երգերով ճոխացնելով արարողութիւնները։

## ԱՍՈՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Հաստատուած իրողութիւն է, որ Լուսաւորչից շատ առաջ Հայաստան էին այցելում Քրիստոնէութեան յոյն եւ ասորի քարոզիչներ, մեծ մասամբ Եղեսիայից եկած ասորի եկեղեցականներ, որոնց ազդեցութիւնը մեծ էր հայ հաւատացեալների վրայ։ Այդ շրջաններում Ասորի Եկեղեցին օժտուած էր մի քանի մեծ դէմքերով - աստուածաբան, երգասաց, տաղերգու - որոնք յօրինում էին նոր աղօթքներ ու երգեր, դուրս բերելու համար Եկեղեցին իր նախնական, միօրինակ ու տաղտկալի վիճակից։

Այդ կարեւոր դէմքերից է Բարդեծան Ասորին, որ ծնուել է 154 թուին Եղեսիայում։ Իմաստասիրական խորունկ մտքով օժտըւած, աստղագէտ եւ աստուածաբան, սակայն նա չէր բաժանում Քրիստոնէութեան որոշ դոգմաները. օրինակի համար մերժում էր յետ մահու յարութեան դաղափարը։

Բարդեծան երբ յարեց Գնոստիկեան հերետիկոսութեան, հալածուեց եւ Հայաստան ապաստանեց, ուր մնաց մինչեւ 222 թուականը, որից յետոյ՝ Եղեսիս վերադարձաւ եւ այնտեղ էլ մահացաւ յաջորդ տարին։ Բարդեծանը թողել է շուրջ 150 կրօնական երգեր, բաղմաթիւ քարոզներ եւ մի գիրք՝ «Ճակատագրի Մասին» անունով։

Կարելի է ենթադրել, որ Լուսաւորչից առաջ Հայաստանում

տարուած քրիստոնէական քարոզութիւնը իր արդիւնքը տուել էր եւ նոր վարդապետութիւնը թափանցել էր ժողովրդական խաւերից ներս . այդ իսկ պատճառով Հայաստանը նկատում էր քրիստոնեաների համար որպէս հիւրընկալ մի երկիր : Դրանով պիտի բացատրել Հովհաննեանց կոյսերի, Բարդեծան Ասորու Հայաստան ապաստանիլը : Եւ եթէ Տրդատ Քրիստոնէութիւնը պետական կրօն յայտարարեց, այդ եղել է ժողովրդի ստիպման տակ :

Երկրորդ դէմքը, շատ աւելի հեղինակաւոր՝ Եփրեմ Ասորին է, որ ծանօթ է Եփրեմ Խուրի անունով եւ որ ծնուել է Մծբինում 306 թուրին, հեթանոս քուրմ Հօրից : 18 տարեկանին յարում է Քրիստոնէութեան եւ աշակերտում է Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետին :

Եփրեմ Ասորու մատենագրութեան Հայերէն թարգմանութեան մէջ տրուած է հետեւեալ զնահատականը նրա անձի եւ կեանքի մասին .

- Երբեք չայցելեց Աքէնի, Աղեքսանդրիա կամ Անտիոք՝ հետեւելու համար բարձրագոյն դպրոցների ուսմանց : Անապատի եւ քարայրների մէջ ապրեց . չինուուց եկեղեցական աստիճաններ եւ գոհացաւ միայն սարկաւագութեամբ : Խորու նկ աստուածաբան, հզօր պերճախօս, բանաստեղծ, երաժիշտ . կատարեալ հին դարերի մի սուրբ :

Բարդեծանի եւ Եփրեմի քերթողութեան գլխաւոր տարրը կազմում են տաղեր եւ օրհնութիւններ, որոնք երգուում էին ժողովրդի կողմից առաւելապէս տօնական օրերին :

Եփրեմը նոյնիսկ միանձնուածիներից կազմել էր մի երգչախումբ, որին ինքն ընկերակցում էր տաւիզով : Եփրեմից է մնացել քերթուածների տուների սկզբնատառերը յարմարեցնելը իր անուան տառերին կամ այբուբենի կարգին (Ակրոստիկոն) :

Ցիշեցինք այս երկու Ասորի եկեղեցական Հայրերի անունները պարզ այն պատճառով, որովհետեւ նրանց յօրինած երգերն ու քարոզները երկար ժամանակ երգուել են նախառակեղարեան Հայեկեղեցում, եւ նրանց հետեւողութեամբ է, որ Թարգմանիչների օրով մեր հոգեւոր երգասացութիւնը սկզբնաւորուել է :

Բազմաթիւ օրինակներ կան, որոնք հաստատում են թէ ինչպէս Եփրեմ Ասորին մեծ ազդեցութիւն է ունեցել՝ որպէս ներշնչալան մեր օրհներգուների համար : Մեսրոպ Մաշտոցին վերագրուած Ապաշխարութեան շարականների մէջ կարելի է տասնեակներով դտնել Եփրեմի աղօթքը շարականի վերածուած : Օրինակի համար՝ Եփրեմ Ասորու այն աղօթքը, որ սկսում է «յարձանս անօրէնութեամբ տարաբերեալ ծփիմ» բառերով, Շարականի մէջ եղել է՝ «ի խորս մեղաց ծովու տարաբերեալ ծփիմ» : Եփրեմի մի ուրիշ ա-

զօթքը, որ սկսում է «Աթիանիմք առաջի քո Տէր եւ խնդրեմ զբովագիտին յանցանաց իմոց» նախաղասութեամբ, Շարականի մէջ դարձել է՝ «Աթիանիմք առաջի քո եւ խնդրեմ զբովագիտին յանցանաց իմոց» եւ շատ նման օրինակներ կան, որ հաստատում են Ասորի եկեղեցու ազդեցութիւնը հայկականի վրայ:

Երբ այս երգերը թարգմանում էին բառացի կերպով, կամ նրանց հետեւողութեամբ յօրինում էին նորերը, տրամաբանական կարելի է հաշուել որ նրանք երգում էին նոյն եղանակով, ինչ որ ասորերէն բնագիրը (\*):

### ՅՈՒՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Միւս կողմից կար, սակայն յունական ազդեցութիւնը:

Յունական դաստիարակութիւն ստացած մեր թարգմանիչները իրենց հետ Հայաստան բերեցին յոյն արհեստի շունչը եւ ոգին: Յունաստանում արդէն վաղուց սկսել էին հրէականի հետեւողութեամբ յօրինել նոր Սաղմոսներ եւ օրհնութիւններ, որոնք մեծ մասմբ Սուրբ Գրքից առնուած զանազան դրուազներ էին: Մեր թարգմանիչները, նրանց հետեւողութեամբ կամ բառացի թարգմանութեամբ, մեր եկեղեցին էին մտցնում նման երգեր, ինչպէս օրինակ՝ «Փառք ի Բարձունս» կամ մեր դմայլելի «Լոյս Զուարթ»ը, որ յունարէնից է թարգմանուած: Բնական է որ նման դէպքում փոխ էին առնուում յունականից նաեւ այդ երգերի եղանակները:

Հետեւում է, ուրեմն, որ մինչեւ մեր Ոսկեդարը հայ հոգեւոր երդասացութիւնը ենթակայ էր Ասորի եւ Յոյն եկեղեցիների ազդեցութեան, ինչպէս մեր ամբողջ մշակոյթը: Դրա համար էլ մեր մատենագիրները հայ հոգեւոր գրականութեան սկզբնաւորութիւնը կապում են Ոսկեդարի մեր թարգմանիչների հետ:

Սահակ Պարթեւ եւ Մեսրոպ Մաշտոց, թարգմանելուց յետոյ Աստուածաշունչը, նպատակադրել էին ազգայնացնել նաեւ հայ եկեղեցու ժամերգութիւնը:

Եւ, ըստ պատմիչների հաւաստումին, մեր դպրութեան երկու պատկառելի հիմնադիրները նախաձեռնում են նաեւ այդ գործը՝ դրելով հայերէն աղօթքներ, երգեր, որոնք յետազայում պիտի ստանային Շարական անունը:

(\*) Հայաստամեայց եկեղեցին եփրեմ Ասորու յիշտառակը յաւերժացրել է նրան սուրբերի շարքը դասելով եւ մասմաւար տօն յատկացմելով: Շարակմացի մէջ բագմաքիւ են նրան նուիրուած շարակաթմերը:

Մեր շարականների հեղինակների մասին հատ ու կտոր տեղեկութիւններ գտնում ենք Շարակնոցի յիշատակարաններում եւ նաեւ երբեմն մեր պատմիչների գործերում։ Համաձայն այդ աղբիւնների Մեսրոպ եւ Սահակ, միւս թարգմանիչների հետ, «արարին երգ շարականաց բաղցը եւ գեղեցիկ եղանակաւ եւ մեծ խորհրդավ ծնունդ Քրիստոսի, Քառասօրեայ գալստեանն ի Տաճարն, Մկրտութեան եւ Եկատորութեան ի Բեթամիա եւ յերաւադէմ, Մեծի Շարքու Զարչարանաց, Յարութեան, Համբարձման եւ Հոգույ Գալստեան, Խաչի Եկեղեցւայ եւ այլ տօնից տէրութականաց եւ ամենայն սրբոց, Ապաշխարութեան եւ Ննջեցելոց, պէս պէս, զանազան եւ ամբիւս, զոր մինչեւ ցայսօր պաշտի Եկեղեցիս Հայաստանայց»։

Այս վկայութիւնը մեղ բնրում է Կիրակոս Գանձակեցի պատմիքը։ Բայց պէտք չէ մոռանալ որ Կիրակոսը ԺԳ. զարու պատմիչ է, որի տուած վկայութիւնը եւ դարի անցքերի, դէմքերի մասին պէտք է վերապահութեամբ ընդունել։

Հայ վաւերական բանասէրներից ոմանք գտնում են, որ Ապաշխարութեան շարականների մէջ, որոնք վերագրւում են Սահակին եւ Մեսրոպին, կան այնպիսի խորութեամբ լեցուն յօրինուածքներ, որ այդ դարում նոյնիսկ Յունաստանում չեն գործածուել եւ երեւում են եօթերորդ դարում։ Բացի այդ, այդ շարականների ոճը հինգերորդ դարի չէ, այլ՝ աւելի ուշ, քերթողական դպրոցին են պատկանում։

Դարերի հոլովոյթի մէջ մեր երկու հսկաները այնքան մեծ հմայք եւ ժողովրդականութիւն են ունեցել, որ, հաւանաբար, ժողովուրդը նրանց է վերագրել ինչ որ վեղեցիկ շարական կամ աղօթք է տեսել։ Բացի այդ, տարբեր Շարակնոցների յիշատակարաններում յաճախ տարբեր անունների են վերագրուել այս կամ այն շարականը, որով՝ ճշգրիտ կերպով տալ իւրաքանչիւր շարականի խկական հեղինակի անունը, դժուար է։

Թարգմանիչներից բացի շարականներ կան վերագրուած Մովսէս Քերթողին, որ Խորենացուց տարբեր է, Մանղակունուն, Օձնեցուն, Ստեփաննոս Սիւնեցուն, Կոմիտաս կաթողիկոսին եւ բազմաթիւ ուրիշների։

### ՄԵՐ ՀՈԳԵՆԻՈՐ ԵՐԳԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ

Մեր հոգեւոր երգերն ունեն հետեւեալ անունները— Կցուրդ կամ Կցորդ, Շարական, Տաղ, Գանձ։

Կցուրդը սկզբնական սաղմոսներին կցուած յաւելուածական աղօթքներ են որ երգում էին Սաղմոսների հետ հին դարերում։

Շարական բառը առաջին անդամ մենք հանդիպում ենք 11րդ դարում, Շնորհալու կողմից յիշատակուած։ Շարական բառի ստուդաբանութեան շուրջ եղել են տարբեր կարծիքներ։ Ոմանք փորձում են կապել պարսկերէն կամ արաբերէն շեր կամ շայիր բառի հետ, որ նշանակում է բանաստեղծութիւն, բանաստեղծ։ Ուրիշները կարծում են որ կապ ունի թրքական շարքի բառի հետ, որ երգի մի տեսակ է։ Կան, կամ աւելի ճիշդ՝ եղել են այնպիսիներ որ փորձել են շարականը բացատրել շար ականց, այսինքն՝ թանկագին քարերի շարք իմաստով։

Ամէնից տրամաբանական բացատրութիւնը կարելի է համարել հետեւեալը։

Ոսկեդարի եւ նրան յաջորդող մի քանի հարիւրամեակների ընթացքում հոգեւոր երգ յօրինելը եւ եկեղեցում երգելը վերապահուած չէր որոշ անհատների. նա ազատ էր բոլորի համար։ Փողովրդին էր մնում այդ երգերը հաւանելը, իւրացնելը եւ կամ մերժելը։ Իր առաւելութիւնների հետ, որ ազատ ասպարէզ էր տրւում բոլորին ստեղծագործելու, այս պարագան ունիչը նաև իր անպատճութիւնը, այն՝ որ եկեղեցի էին խուժում ամէն ճաշակի եւ յաճախ կասկածելի ընդունակութեան մարդկանց կողմից յօրինուած երգերը, մանաւանդ որ այդ դարերում եկեղեցին չունիչ տակաւին իր պաշտօնական երգացանկը՝ յատկացուած այս կամ այն տօնական օրուան կամ տօնին։ Տօնական օրերին երգւում էր ինչ որ հասնէր - Սաղմոս, օրհնութիւն, տաղ, շարական կամ աղօթք։ Նոյն կացութիւնն էր տիրում նաև Յոյն եկեղեցում։ Եօթերորդ դարից այս պարագան ուշադրութեան է առնուում եւ փորձեր են կատարուում կարգ ու կանոնի տակ դնել հոգեւոր երգասացութիւնը։

Ընդգծեցինք այս երկու բառերը, որովհետեւ նրանք ընդունուեցին որպէս թերմիններ յետադայ դարերում։ Արդարեւ, ութերորդ դարից սկսած մեր եկեղեցական հայրերը, հետեւելով Յոյների օրինակին, որոշ սահմանումներ եւ սեղմումներ են մտցնում մեր հոգեւոր երգասացութեան մէջ։ Որոշ տօների համար ընտրում են պատշաճ աղօթքներ եւ երգեր, որոնց տալիս են կԱՆՈՒՆ կամ կԱՐԴ տնումները։ Մրանք կազմուած են ութը երգերի շարքից, որոնցից իւրաքանչիւրին նախորդում է մի տուն Սաղմոս։ Սաղմոսը կարդալուց յետոյ, նոյնը կրկնուում է երգով։ Այդ ութը Սաղմուների եւ նրանց յաջորդող երգերի շարքը հետեւեալն է.

Ա. «Օրինեսցով զծէր զի փառօք է փառաւորեալցին յաջորդում է ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ։

Բ. «ՕՐՀՆԵԱԼ ես Ֆէր Աստուած հարցն մերոցցին՝ ՀԱՐՑԼ։

Գ. «ՕՐՀՆԵցէք ամենայն Գործս Տեառնցին՝ ԳՈՐԾՔԼ։

- Դ. «Մեծացուսցէ անձն իմ զՃԷՐ»ին՝ ՄԵԾԱՑՈՒՍՑԻՆ, որ  
Աստուածածնի փառաբանումն է:
- Ե. «Ողորմեա ինձ Աստուած»ին՝ ՈՂՈՐՄԵԱՆ:
- Զ. «ՕՐՀՆԵԳԷՔ զՃԷՐ յԵՐԿԻՄԱ»ին՝ ՏՃՐ ՅԵՐԿՆԻՑԼ:
- Է. «Համբարձի զաշս իմ ի լերին»ին՝ «ՀԱՄԲԱՐՁԻՆ»:
- Ը. Եւ Ճաշու:

Առաջին վեց երգերը երգում են Առաւօտեան ժամերգութեան ժամանակ. Համբարձին՝ Երեկոյեան, իսկ Ճաշուն՝ Միջօրէի:

Ստացում է, ուրեմն, որ ԿԱՆՈՆԸ, կամ ԿԱՐԳԸ ամփոփում է այս ութ երգերի շարքը, որից եւ, հաւանաբար, ստացուել է Շարական անունը, այսինքն՝ մի երգ որ կապ ունի այս կամ այն շարքին:

Այս մեկնութեան որպէս հաստատում կարելի է յիշել այն իրողութիւնը որ շարական բառը մեր հին մատենադիրներից եւ ոչ մէկը չի յիշատակում, որովհետեւ այն դարերում նա ստեղծուած չէր:

Եկեղեցական երգերի ԿԱՆՈՆԸ կամ ԿԱՐԳԸ մեր եկեղեցում մտցնում է, ըստ պատմիչների, Ստեփաննոս Սիւնեցի եպիսկոպոսը, որ ապրել է 8րդ դարում եւ ճանաչուել է որպէս խմաստասէր, գրականագէտ, մեկնաբան, թարգմանիչ եւ մանաւանդ՝ հոգեւոր երգերի հեղինակ: Նրան է վերագրում նաեւ մեր եկեղեցական ութ ձայների համակարգը, հակառակ նրան, որ Յայսմաւուրքի մէջ այդ նախաձեռնութիւնը նորից վերագրում է Սահակ Պարթեւին: Այսպէս, մինչ Ստեփաննոս Օրբելիանը վկայաբանում է՝ «... Բաժանեաց եւ զութ ձայնսն եւ կարգեաց, շարեաց շարականս զբարութեան օրինութիւնն» Ստեփաննոս Սիւնեցու մասին խօսած ժամանակ, Յայսմաւուրքը գրում է՝ «Արքին երգս շարականաց եւ կարգեցին եղանակս ամենայն ձայնից. զորս բաժանեաց ի միմեանց սուրբ հայրապետն Խանակ Պարքեւ տասն ձայնս»:

Թէ որոնք են եղել Սահակ Պարթեւի համակարգի ձայները տակաւին կարելի չէ եղած ճշղել, մինչդեռ Սիւնեցու կարգաւորումը պահուում է մինչեւ այսօր, որ յայտնի է Կարդ Ութը Զայնից անունով եւ ունի հետեւեալ անունների շարքը— Առաջին Զայն՝ (Ա. 2), Երկրորդ Զայն՝ (Բ. 2), Երրորդ Զայն՝ (Գ. 2), Չորրորդ Զայն՝ (Դ. 2): Այս չորս բուն ձայներն ունեն իրենց արբանեակ ձայները, որ կոչում են կողմ կամ՝ կոչմունք եւ ունեն հետեւեալ անունները— Ա. Կողմ, Բ. Կողմ, Գ. Կողմ, Դ. Կողմ: Եւ Չորրորդ Կողմ՝ Դկ.:

Կոչմունք ձայներն ունեն երկրորդ անուն եւս. այսպէս՝ Բկ.

կոչւում է նաեւ Աւագ Զայն, ԳԿ. կոչւում է՝ Վառ Զայն, իսկ ԴԿ. Վերջ Զայն:

Ստեփաննոս Սիւնեցին ունենում է եղերական վախճան: 735 թուին նա սպանւում է վատարարոյ մի կնոջ կողմից, որին քանից Սիւնեցին յանդիմանել էր իր վարքի համար: Ժողովուրդը ստեղծում է այդ մահուան շուրջ հետաքրքրական մի առասպել: Իրեւ թէ Սիւնեցու մահուան պատճառով յաջորդ օրն իսկ ուժեղ երկրաշրժով կործաննում է կնոջ բնակած աւանը, որին զոհ են գնում 10.000 հոգի: Այդ աղէտի հետեւանքով այդ ձորը կոչւում է Վայոց Զոր:

Մեր գրականութեան եւ երաժշտութեան պատմութեան մէջ Ստեփաննոս Սիւնեցու անուան հետ սերտօրէն կապուած է նրա քրոջ՝ Սահակաղուխտի անունը, որ եղել է մեր առաջին կին բանաստեղծուհին եւ երաժշտուհին: Նոյն Օրբելեան պատմիչը հիացմունքով է խօսում Սահակաղուխտի բարոյական վարքի, ունեցած հաւատքի, բանաստեղծական եւ երաժշտական տաղանդի մասին: Սահակաղուխտը կեանքից քաշուել էր մի մենաստան, ուր եւ հաստատել էր իր երաժշտական ստուգիս: Նա յօրինում էր կրօնական երգի թէ՛ բառերը եւ թէ՛ եղանակը, որոնք սոլորեցնում էր ամէն կողմից դէպի իրեն եկած դպիրներին: Իր մենարանի մի մասը սեւ վարագոյրով բաժանել էր միւսից. մի մասում ինքն էր նստում, միւսում՝ իր աշակերտները: Նա երգում էր նոր կամ հին յօրինած երգերը եւ կրկնել էր տալիս միւսներին մինչեւ որ սովորէին: Դարու պատմիչը՝ Ղեւոնդ երէց նրա երգի մասին դրում է ։ ։ ։ Հրեշտակական երգի ի վերայ երկրի . . .

Աստուածածնին նուիրուած իր երգերից մէկը, Սրբուհի Մարիամ անունով, իր անուան սկզբնատառերով է կազմուած՝ Սահակաղուխտ :

Այդ շրջանում հոգեւոր երգերը դրում էին ազատ չափով: Սա հետեւանք էր այն արգելքին որ դրել էր Լավողիկէի տիեզերական ժողովը: 360 թուին Լավողիկէում դումարուած այդ ժողովը քննութեան է առնում այն հարցը թէ՛ հոգեւոր երգերը պէ՞տք է որ տաղաչափութեամբ գրուեն, թէ՛ արձակ չափով: Պատճառը բացատրում է այն իրողութեամբ որ Բարդեան Ասորու եւ Եփրեմ Խուրիի սկսած տաղաչափական շարժումը լայն ծաւալում էր գտել եւ սկսել էր վարակիչ դառնալ միւս Եկեղեցիների համար: Տիեզերական ժողովը քննարկելով այդ հարցը գտնում է որ տաղաչափական արուեստը հեթանոսական արտայայտութիւն է եւ պէտք է արգիել հոգեւոր երգերը այդ ոճով գրելը: Մարդիկ պէտք չէ որ

Աստուծոյ հետ ոտանաւորով խօսեն, որ անընական մի երեւոյթ է, տրամաբանում է ժողովը:

Ճշգուած չէ այն հարցը թէ Հայաստանեայց Եկեղեցին մասնակցել է այդ ժողովին թէ ոչ. բայց ստոյդ է, որ նա որդեգրել է այդ սկզբունքը եւ մերժել է տաղաչափութեամբ բանաստեղծութիւնները մեր Հոգեւոր երգասացութեան մէջ:

Գեղեցիկ բացառութիւն է կազմում Կոմիտաս Կաթողիկոսի Հոչակաւոր «Անձինք Նուիրեալք» շաբականը, որ առաջին տաղաչափական բանաստեղծութիւնն է մեր Հոգեւոր գրականութեան մէջ և Հանդիսանում է առաջին վէմը մեր Վերածնութեան շխնքի:

Հոգեւոր գրականութեան մէջ տաղաչափական բանաստեղծութիւնը վճռականապէս մտցրեց 12րդ դարում՝ Ներսէս Շնորհալին, որի մասին աւելի մանրամասնորէն պիտի խօսենք աւելի ուշ:

Սահակագուխափ հետ, որպէս կին գրող եւ երաժիշտ, իր մասնաւոր տեղն ունի Վահան Գողթնեցու քոյրը՝ Խոսրովիդուխտը: Իր եղանակով, Վահան Գողթնեցու նահատակութեան առթիւ նրա դրած բանաստեղծութիւն-շաբականը մինչեւ այսօր պահում է իր գեղեցիութիւնը եւ երգում է հայ եկեղեցում:

Մանօթ է Վահան Գողթնեցու ողբերգութիւնը իր հեքիաթային պատմութեամբ:

Արաբական բանակները Հայաստանը դրաւելուց յետոյ հաղարաւոր գերիներ են տանում այն ժամանակուայ իրենց մայրաքաղաքը՝ Դամասկոս: Գերիների մէջ է լինում նաեւ Վահանը, Գողթանի Տէր Խոսրով իշխանի որդին, հազիւ չորս տարեկան:

Մանուկ Վահանը իր ուշիմութեամբ, բնական չնորհներով գրաւում է Խալիֆայի ուշադրութիւնը. եւ այս վերջինը առնում է զայն իր պաշտպանութեան տակ: Վահանը ստանում է կանոնաւոր կրթութիւն եւ յետաղային դառնում է արքունի դիւանապետ: Խալիֆայի ստիպման տակ Վահանը մահմետականութիւն է ընդունում եւ կոչում է Վահաբ:

Օմար խալիֆայի հրամանով գերի բերուած բոլոր հայերը արձակում են եւ վերադառնում են Հայաստան: Մինչ այդ, Վահան Գողթնեցին իր հայ եւ քրիստոնեայ լինելը իմացել էր եւ փափաք է յայտնում նոյնապէս վերադառնալ իր հայրենիքը, մահաւանդ երբ լուր է ունենում որ հայրենիքում մի քոյր ունի, որ իրեն է սպասում կարօտով՝ տարիներից ի վեր: Օմարը մերժում է արաօնել, կասկածելով որ կարող էր չվերադառնալ: Բայց Վահանի խոստումներին եւ պնդումներին տեղի տալով, ի վերջոյ, Խալիֆան արտօնում է:

Վահանը Հայաստան վերադառնալով ենթարկւում է կատարելալ հոգեփոխութեան։ Հետզհետէ նրա մէջ արթնանում են մանկութեան յուշերը, հարազատների կարօտը, իր պապերի հաւատքը, եւ որոշում է այլեւս չլերադառնալ, մանաւանդ երբ լսում է որ Օմար իսպան մեռել է եւ, հետեւաբար իր վերադարձը հետապնդող պիտի չլինէր։

Քիչ ժամանակից յետոյ Վահանի համար սկսւում է նոր տառապանք։ Իր մանկութեան ընկերները եւ հարազատները Արարների վախից սկսում են զգուշանալ նրան շատ մօտիկութիւն ցոյց տալուց, մանաւանդ երբ յայտնի է լինում որ նա մահմետականութիւն է ընդունել Դամասկոսում։ Միւս կողմից՝ նա իրեն համարում է խոստմաղբուժ եւ դասալիք։ Ի վերջոյ որոշում է վերադառնալ Դամասկոս եւ պատմել ամէն բան՝ որ վերադարձել է իր հայրենի կրօնին։

Դամասկոսում այլ օրերին իշխում էր Հեշմ Խալիֆան։ Վահանը ներկայանում է նրան, պատմում է ամէն բան եւ խնդրում է որ ազատ թողնեն իրեն՝ վերադառնալու իր հայրենի կրօնին։ Խալիֆան եւ արքունի մեծամեծները ամէն ջանք թափում են Վահանին տարհամողելու համար, որ, սակայն, մնում է անդրդուելի։ Վահանը դլաստուում է 737 թուին եւ դասւում հայ նահատակների եւ սուրբերի շարքը։

Իր եղբօր նահատակութեան վրայ Խոսրովիդուխտ դրում է իր տառապակոծ շարականը, որ մինչեւ այսօր երգում է Վահան Գողթնեցուն նուիրուած տօնի օրը։

Խոսրովիդուխտը զրել է մի շարք շարականներ եւ տաղեր։ Նրան է վերադրուում Զրօրհնեաց հրաշալի երդը՝ «Ո՞վ Զարմանալի»։

Ինչպէս քիչ առաջ ասուեց, երդ յօրինելու, եկեղեցում երգելու կամ երգել տալու համար մեզ մօտ ոչ մի արգելք չկար։ Դրա հետեւանքն եղաւ այն, որ այնտեղ տարուեցին հարիւրաւոր տաղանդաւոր երգերի հետ նաեւ շատ անճաշակ գրուածքներ։ Բացի այդ, Եկեղեցու երգասացութիւնը դեռ չէր կանոնաւորուած, յայտնի չէր թէ որ օրը ինչ շարական պիտի երգուէր։ Ստեղծուած էր կատարեալ անիշխանութիւն։ Դրա մի փայլուն ապացոյցը մեզ տալիս է պատմիչ Կիրակոս Գանձակեցին։ Նա պատմում է որ մի անգամ ներսէս Շինող կաթողիկոսը Վարդավառի տօնին ներկայ է զտնւում Բագաւանում։ Իրեն ընկերակցող կրօնաւորները երգում են տօնին պատշաճ շարականը եւ սպասում են որ դիմացի դասը շարունակէ յաջորդ տունը։ Այս վերջինը բոլորովին անծանօթ երգուած շարականին՝ կարկամում է եւ լուս։ Փորձում են մի ուրիշ

շարական երգել. նոյն պատմութիւնը, որով ծայր է տալիս արարողութեան անկարողութեան եւ խանդարման: Այս միջադէպը պատճառ է լինում որ կաթողիկոսը մասնաւոր եկեղեցական ժողով գումարի՝ վերաքննելու համար բոլոր շարականները եւ տնօրինելու տօնական օրերի յատուկ երգերը:

Ժողովը տեղի է ունենում Դուինում՝ 645 թուին, մասնակցութեամբ 17 եպիսկոպոսների եւ բազմաթիւ վարդապետների: Ժողովին մասնակցում է նաև Անի ղաւառի Դարենվանքի Առաջնորդը, Բարսեղը, որ ճանաչուած էր Ճոն մականունով եւ համբաւ ունէր որպէս հմուտ երգասաց: Նրան է յանձնուում շարականները զտելու, դասաւորելու եւ արարողութիւնները կանոնաւորելու գործը:

Բարսեղ Ճոնը յաջողութեամբ զլուխ է հանում իրեն յանձնուած գործը: Շարականոցից դուրս են հանում բազմաթիւ երգեր, մնացեալը կազմում է մի մեծ հատոր եւ կոչում է Ճոնընտիրը: Դուրս մնացած շարականներին արուեց պարականոն շարական անունը, որոնց մէջ, սակայն, քիչ չեն դեղեցիկ ու արժէքաւոր երգերը:

Ժողովն ընտրում է մասնաւոր պատուիրակներ, որոնք պիտի չըջէին Հայաստանի բոլոր մասերը եւ անհրաժեշտ հրահանդիները տային եղած նոր կարգադրութեան մասին (\*):

Մնում էր կարգաւորել եկեղեցական «Խորհուրդների» ծիսական արարողութիւնները, որ նոյնպէս անկանոն վիճակում էր:

Այդ աշխատանքը տանում է Սեւանայ վանքի երբեմնի վանահայր, ապա կաթողիկոս Մաշտոցը: Մաշտոցը՝ 870 թուին դասաւորում է բոլոր ծէսերի ազօթքները, երգերը եւ արարողութիւնները եւ ամփոփում է մի հատորի մէջ, որ իր անունով կոչում է ՄԱՇՏՈՑ, ոմանք գրում են Մաշտոց: Մինչեւ այսօր Հայաստան-իայց եկեղեցում կատարուող ամէն արարողութիւն տեղի է ունենում համաձայն Մաշտոցի թելադրանքներին:

Եկեղեցական երդասացութեան բարեւզեան գործում մեծ դեր է խաղացել ժԳ. դարում նաև Գրիգոր Տաթեւացին. իսկ նրանից առաջ՝ ժԲ. դարում Ներսէս Շնորհալին, որի գործը բոլորովին պիտի յեղաշրջէր երգասացութիւնը, եւ որը առանձին ընդարձակ ուսումնասիրութեան նիւթ է:

(\*) Մանուկ Արեգեամբ այս բարեկարգութեան քուականի մասին կատած է յայտնում: Նրա կարծիքով Գանձակեցին եւ Վարդան Արեւելքցին, որ վկայաբանում են այս մասին, Ներսէս Շիմոնը շփոքել են Ներսէս Շնորհալու հետ եւ Բարսեղ Ճոնն էլ՝ Բարսեղ վարդապետի հետ, որ եղել է Շնորհալու մտերիմ գործակիցը:

## ՊԱՏԱՐԱԳ

Քրիստոնէական եկեղեցու ամենամեծ խորհուրդը համար-  
ւում է Պատարագը:

Պատարագի մասին էլ կարելի է ասել, որ ամբողջապէս փո-  
խառնուել է Հրէական Պատէքի արարողութիւնից:

Պատարագ բառը պարսկերէն է սանսկրիտ արմատով, որ նշա-  
նակում է զոհ, զոհաբերութիւն: Ճիշդ այդտեղից էլ հետեւում է  
նրա Հրէական ծագումը, որովհետեւ Մովսէսի տնօրինած ծէսով  
Հրէական Զատկի կամ Պատէքի համար կար յատուկ արարողութիւն,  
որի առանցքը կազմում էր զառան զոհաբերութիւնը եւ կատար-  
ւում էր հետեւեալ կերպով:

Զոհաբերութիւն կատարող քահանան նախ բազմաթիւ ան-  
դամներ լուսցում էր, կարդալով՝ «Խուացից սրբութեամբ զձեսու  
իմ» Սաղմոսը: Ապա սեղանի վրայ էին դնում զատկական գառը եւ  
նրա մօտ՝ հացն ու դինին: Եւ որովհետեւ Պատէքի այս արարողու-  
թիւնը խորհրդանշում էր Խորայէլացիների Եղիպատոսից աղատուե-  
լը եւ Ելքը, քահանան բացարում էր այդ պատմութեան բոլոր  
մանրամասնութիւնները, որից յետոյ բոլորը միասին երգում էին  
«Յելանելն Խորայէլի յԵգիպտոսէ»՝ Սաղմոս 113-ը: Ապա զոհաբեր-  
ւում էր զառը, օրհնուում էր հացը եւ դինին եւ բաժանուում էր ժո-  
ղովրդին: Արարողութիւնը վերջանում էր «Մի մեզ Տէր», «Խոս-  
տավան եղերուք» եւ «Առ գետս Բարելացւոց» սաղմոսների երգով:  
Արարողութեան վերջաւորութեան լինում էր նուիրահաւաքութիւն,  
որից դոյացած զումարը յատկացւում էր որբերի, հիւանդների եւ  
չքաւորների կարիքներին:

Ճիշդ այնպէս, ինչպէս առաջին քրիստոնեաները Հրէական  
Տաճարից դէպի քրիստոնէական ժողովարան փոխադրեցին աղօթք-  
ներն ու օրհնութիւնները, Պատէքի այս արարողութիւնն եւս իրենց  
հետ ժողովարան տարին, փոխելով Աղապի արարողութեան, աւե-  
լի ուշ՝ Պատարագի:

Դրա համար առիթն էլ կար: Խորհրդաւոր Ընթրիքի պարա-  
գան շատ յարմար էր ու պատշաճ: Ինչպէս յայտնի է, Յիսուս վեր-  
ջին անդամ հանդիպում ունեցաւ իր աշակերտների հետ Վերնատա-  
նը եւ միասին ընթրեց նրանց հետ: Այդ հանդիպման յետադային  
արուեց «Խորհրդաւոր Ընթրիք» անունը, որովհետեւ այնտեղ էր որ  
Յիսուս նախազգաց իրեն վերապահուած վախճանը եւ անուղղակի  
կերպով մատնանշեց Յուլյայի դերը այդ զործում: Յիսուս մեծ կա-  
րեւորութիւն տուեց այդ ընթրիքին, որ դարձաւ մի տեսակ նաեւ  
իր կտակը: Յիսուս առաւ հացը եւ դինին, օրհնեց եւ յանձնարա-

բեց աշակերտներին ուստել որպէս խորհրդանիշը իր մարմնի եւ իմել զինին՝ որպէս իր արեան :

«Եւ մինչդեռ ուստիին նոքա, առ Յիսուս հաց, օրինեաց եւ երեկ եւ եւ աշակերտացն եւ ասէ. Առէք, կերէք այս է մարմին իմ: Եւ առեալ բաժակ գոհացաւ, եւ նոցա եւ ասէ. Արքէք ի դմանէ ամենենան, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի բազմաց հեգու ի քողութիւն մեղաց» (Մատթ. 26:26):

Այս կերպով է որ սկզբնաւորուեց Պատարագը, որ իրենից ներկայացնում է երեք խորհուրդ - Նուիրում, Սրբացում եւ Ճաշակում :

Եւ ճշշդ հրէական քահանայի նման Պատարագիչ քահանան եւս նոյն Սաղմուը կարդալով լուացում է եւ սկսում նախ Նուիրումի, ապա Զոհաբերութեան կամ Սրբացման, եւ յետոյ էլ ճաշակման արարողութեան :

Մանօթ է թէ ինչպէս Պատարագիչ քահանան նոյն օրինակով օրհում է հացը, (նշխարքը), մասնատում է եւ վրան զինին աւելացնելով պատրաստում է Հաղորդութիւնը, որ Զոհաբերութեան խորհուրդն իսկ է, եւ յետոյ ինքը ճաշակում է եւ մասի միջոցով ճաշակել է տալիս ժողովրդին:

Այս նախնական Պատարագը դարերի ընթացքում դարձացաւ, ճոխացաւ աղօթքներով եւ երգերով ու դարձաւ եկեղեցական կարեւոր խորհուրդներից մէկը, հետզհետէ ստանալով մի տեսակ բեմադրական երեւոյթ, որի դերակատարներն են զոհաբերութիւն կատարող քահանան կամ պատարագիչը, սարկաւագը, եւ ժողովուրդը, որի դերը ուշ դարերում յանձնուեց Դուռաց դասին:

Արեւելեան հին եկեղեցիներում - կովտական, ասորական, եթովպական, հայկական - Պատարագի արարողութիւնը պահել է իր նախնական վիճակը: Կաթոլիկ եկեղեցին հետզհետէ բարեփոխել է եւ կրծատել արարողութիւնը, որ կատարւում է դրեթէ անձայն՝ խորհրդաւոր լուութեան մէջ. մինչդեռ նախնական եկեղեցիներում Պատարագի ամբողջ ընթացքում անվերջ լսւում է Քահանայի, Սարկաւագի եւ Դուռաց դասի երգեցողութիւնը:

Հին դարերում Պատարագը մատուցեում էր ամէն օր. հետզհետէ կրծատուեց շաբաթը մէկ անդամի: Կաթոլիկ եկեղեցին պահել է ամենօրեայ պատարագի սովորութիւնը. երբեմն նոյնիսկ օրը մի քանի անգամ:

Պատարագի վերջաւորութեան բաժանուող մասն ալ (նըլշխարք), միեւոյն հրէական ճաշակման արարողութիւնն է, որ կատարւում է «Ճաշակեցէք եւ տեսէք»ի հնչիւների տակ:

Հայ եկեղեցական երգասացութեան յատկացուած մեր այս համառօտ տեսութիւնից հետեւում է, որ նա մեծապէս ենթակայ է եղել մի քանի օտար - Ասորի, Յոյն, Հրեայ ազգեցութիւնների: Դժուար է ստոյդ գաղափար կազմել հին դարերի այդ երգերի եղանակների մասին, տրուած լինելով որ ժամանակի խաղագրութիւնը, որով նրանք որոշ դարերում դրանցուել են, տակաւին չելքեծանուած: Սակայն նկատի ունենալով մեր եկեղեցու խիստ աւանդապաշտ եւ պահպանողական լինելը իր աւանդութիւնների նըկատմամբ, կարելի է ասել որ դրեթէ որեւէ բան չի կարող փոխուած լինել իրենց բուն եղանակից, որով երգել են յօրինողները:

Հայ եկեղեցու ազգայնացումը, ըստ որում, կատարուած էր մասսամբ միայն՝ հայերէնի թարգմանուելով երդի բանաստեղծութիւնը միայն, որովհետեւ որքան եւ հայերէնը փոխարինեց ասորերէնին եւ յունարէնին, եկեղեցու երգասացութիւնը սակայն, շարունակեց մնալ հայութեան օտար՝ իր եղանակներով:

Այս պարագան ստեղծել էր մի ուրիշ անպատեհութիւն եւս, այն որ ժողովուրդը եկեղեցում չէր գտնում հոգեկան բաւարարութիւն: Գրաբար լեզուն իրեն համար անհասկանալի էր, իսկ երգասացութիւնը՝ անհարազատ: Իսկ զբառում ստեղծուել էր մի նոր երաժշտութիւն՝ գուսանական, որ հրապուրիչ էր ամէն տեսակէտով:

Ժողովրդի եւ եկեղեցու միջեւ ստեղծուում է մի անջրպետ, որ գնալով խորանում է մինչեւ 12րդ դար, երբ ասպարէզ է իջնում մեր մշակոյթի պատմութեան ամէնից պայծառ դէմքերից մէկը, Ներսէս Շնորհալին:

### Ն. ՇՆՈՐՀԱԼԻ

Շնորհալին իր բոլոր բարենորոգումներով տանում էր հետեւողական մի գիծ - եկեղեցին ժողովրդականացնել: Նրա այդ քաղաքականութիւնը բխում էր երկու տարբեր, բայց իրար լրացնող պատճառներից: նախ՝ ժողովրդին աւելի մօտից կապել եկեղեցուն, եւ երկրորդ՝ լրացնել եկեղեցու ազգայնացման գործը, այսինքն տալ նրան այն վերջնական նշանակութիւնը, ինչ որ ձգտել էին Եղարու թարգմանիչները, ստեղծելով հայ գիրը, թարգմանելով եւ հայացնելով Աստուածաշունչն ու եկեղեցական արարողութիւնները:

Շնորհալին համոզուած էր, որ այդ նպատակի իրագործման համար մեծ դեր էր վերապահուած ժողովրդական արուեստին: Նա չէր բաժանում իր նախորդների եկեղեցու անձեռնմխելիութեան տեսակէտը, ընդհակառակն, համոզուած էր, որ ինչ որ չի բխում ժողովրդից, չի կարող ժողովրդականութիւն ստանալ եւ յարատեւ

կեանք ունենալ։ Ուստի եւ նա իր 48-էն աւելի շարականները եւ տաղերը յօրինելիս օգտուեց ժողովրդական բանահիւսութիւնից եւ երգերից։ Ուրիշ խօսքով՝ նա ձեռնարկեց մի գործի, որ ոչ միայն դէմ էր հայ Եկեղեցու այլ նաեւ համազրիստոնէական Եկեղեցիների տաշնդութիւններին, բեկանելով Լավողիկէի ժողովի 59րդ յօդուածի արգելքը՝ տաղաչափօրէն հոգեւոր երգեր յօրինելու մասին։

Ծնորհալին զրում էր իր յօրինած երգերի թէ բառերը եւ թէ եղանակը։ Եւ դրա համար նա դիմում է ամենից աւելի վստահելի աղբիւրին՝ հայ ժողովրդական երգին, իւրացնելով ոչ միայն նրա տաղաչափութիւնը եւ եղանակը, այլ նաեւ բառամթերքը։

Ծնորհալու յօրինած երգերը, իրենց նոր ոճով, իրենց աշխոյժ բնոյթով եւ ազգային հարազատ ուրով, գտնում են անօրինակ ջերմ ընդունելութիւն ժողովուրդի կողմից։ Բաւական է յիշել նրա «Առաւոտ կուսոյցն», «Նայեաց Սիրով»ը, «Նորահրաշ Պատկանք»ը, «Տարածեալ»ը հաստատելու համար նրանց ժողովրդական եւ հայեցի բնոյթը։

Այդ օրից սկսած Հայ Եկեղեցու երգասացութիւնը մտնում է նոր հունի մէջ։ Ծնորհալուն հետեւում են Միջնադարեան մեր տաղերգուները, որ հսկայ նպաստ են բերում մեր թէ աշխարհիկ եւ թէ եկեղեցական գրականութեան։

## THE ORIGIN AND DEVELOPMENT OF ARMENIAN CHURCH HYMNODY

PROF. A. BADMAKERIAN

The author makes a study of the origin and development of Armenian church hymnody. Based on the testimonies of Armenian narrators, whom he quotes extensively, he confirms the fact that early Eastern Christian churches — Assyrian, Coptic, Ethiopian, Armenian — have been swayed by the benedictory chants of the Hebraic temple, and that the first

Christians and Apostles were Jews, Keeping the « Law », and frequently attended the religious ceremonies, at the Temple of Solomon. Later, subjected to persecution, they withdrew from the Temple and established their own places of worship, without relinquishing the traditions and chants of the Jewish Temple. To these traditions, however, they gave a Christian imprint. This new religion and its art, which was borrowed from the Hebraic Temple, were established in the Diaspora.

The author then indicates that area of Armenia which was under Persian rule, was subject to Assyrian influences. The prayer and praise chants of **Bardadzan the Assyrian** and **Yeprem Khouri** were translated into Armenian and were sung in the Armenian Church.

The Greek Church too has left its impress on the Armenian Church, Armenian youths who were sent to Athens, Alexandria, and other cultural centers for higher studies, brought with them to Armenia the spirit and inspiration of the Greek arts.

The author then explains at some length the origin of the Armenian Mass which he relates to the Hebraic ceremony of the Paschal Feast.

Armenian Church hymnody, in its pure strain, begins to take form as of the 12th century, through the efforts of **NERCES SHNORHALI**, who was at once poet and hymnologist. To free the Armenian Church from alien influence, Shnorhali resorts to the expressions of popular art; namely, its prosody, rhythm, and diction. With these elements he composes Church hymns, in a completely novel style, which meets with great popularity, for in these new hymns the people finds the genuine ring and inspiration that moved the heart.

After the pattern set by Shnorhali, successions like **Krikor Degha, Hovhannes Yerzinkatzi, Frig**, and others, begin to write secular poetry also.

Shnorhali ushers in the Armenian Renaissance of the 12th century; noteworthy, Europe experiences her own four centuries later, in the 16th century.